ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ «Ձևավորող գնահատումը «Մայրենի», «Հայոց լեզու», «Գրականություն» և «Հայ գրականություն» առարկաների դասերին, գնահատման գործիքներ»

Կատարող՝ Խաչատրյան Անուշ

Դպրոց՝ Երևանի հ.181 հիմնական

Առարկա՝ «Հայոց լեզու» և «Գրականություն»

Կազմակերպություն՝ «Երևանի Լ.Միրիջանյանի անվան հ.155 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

Խմբի պատասխանատու՝ Անահիտ Զոհրաբյան

Երևան 2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3

Գլուխ 1 «Ձևավորող գնահատումը «Մայրենի», «Հայոց լեզու», «Գրականություն» և «Հայ գրականություն» առարկաների դասերին, գնահատման գործիքներ»

1.1 Ձևավորող գնահատման դերն ու նշանակությունը ուսումնառության գործընթացում.....5

1.2 «Մայրենի», «Հայոց լեզու», «Գրականություն» և «Հայ գրականություն» առարկաների դասերին ձևավորող գնահատման կիրառման օրինակներ.....11

Եզրակացություններ և առաջարկություններ.....19

Օգտագործված գրականության ցանկ.....20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ելնելով այն հանգամանքից, որ կրթական հաստատությունը սովորողին պետք է ապահովի ոչ միայն գիտելիքներով, այլև այս կամ այն երևույթի մասին գործնականում ինքնուրույն վերլուծություններ և եզրահանգումներ կատարելու փորձառությամբ՝ անհրաժեշտություն է առաջանում ուսումնառության ընթացքում հաշվի առնել սովորողների՝ որպես ապագա մասնագետների, կարողունակությունների ձևավորման գործընթացը ևս: Կարողունակությունները, որպես անձի գիտելիքների, կարողությունների, հմտությունների, գործունեության ձևերի փոխկապակցված համախումբ, ձևավորվում են ուսումնական գործընթացներում տարբեր առարկաների տիրապետման շնորհիվ և ծառայում են ապագա արդյունավետ գործունեության իրականացմանը: Ասվածից կարող ենք եզրահանգել, որ սովորողի մոտ ինքնուրույն գործելու, որոշումներ կայացնելու, նախաձեռնողականություն ձևավերելու համար առաջնային նախապայմաններ են հանդիսանում ուսումնական գործընթացի ժամանակ հնարավորություններ ստեղծել, որպեսզի սովորողները հնարավորություն ունենան որոշում կայացնելու, այս կամ այն խնդրի վերաբերյալ պատասխանատվության գիտակցում ձևավորելու, աստիճանաբար կայացման ու ձեռքբերումների հասնելու:

Անշուշտ, այս ամենի համար առաջին հերթին կարևոր է, որ սովորողը ուսումնական գործընթացից կարողանա ստանա առավելագույնը և կարողանա գործել ինքնուրույն: Հայոց լեզվի և գրականության ուսուցչի առաջ, կրթադաստիարակչական գործառույթից զատ, ծառանում է նաև առարկայի ուսումնական ընթացքում դասընթացի նյութերի հիման վրա սովորողների իմացական առաջընթացի մշտադիտարկումն ու արդյունքների գնահատումը: Կարծում ենք՝ նոր կրթական պահանջներով պայմանավորված՝ հարկ է ուշադրության արժանացնել նաև ձևավորող գնահատմանը, որը ուսոցչին տալիս է ուսումնառության գործընթացը մշտադիտարկելու, կառավարելու մի շարք արդյունավետ գործիքներ ու մեթոդական հնարներ:

Հետազոտության թեմայի արդիականությունը : Թեմայի արդիականությունը պայմանավորել ենք հայոց լեզու և գրականության առարկաների դասավանդման ընթացում գնահատման եղանակների ճիշտ ընտրության կարևորությամբ, ինչը կարող է մեծ ազդեցություն ունենալ սովորողի առաջադիմության ու սովորելու մոտիվացիայի վրա:

Հետազոտության նպատակը: Ուսումնասիրել ձևավորող գնահատման ազդեցությունը «Մայրենի», «Հայոց լեզու», «Գրականություն» և «Հայ գրականություն» ուսումնական առարկաների դասավանդման ընթացքում սովորողների առաջադիմության ու սովորելու մոտիվացիայի բարձրացման վրա:

Հետազոտության խնդիրը: Սահմանել ձևավորող գնահատման գործիքները, դրանց կիրառման եղանակները և այն մեթոդներն ու մանկավարժական հնարները, որոնց վրա հիմնվելով, ուսուցիչը դասի ընթացքում կարող է հետադարձ կապ ստեղծել՝ նպատակ ունենալով կառավարելի դաշտում պահել սովորողների գիտելիքների ու կարողունակությունների ձեռքբերումն ու զարգացումը:

ԳԼՈՒԽ 1 «ՁևԱՎՈՐՈՂ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ «ՄԱՅՐԵՆԻ», «ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ», «ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» և «ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԴԱՍԵՐԻՆ, ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ»

1.1 Ձևավորող գնահատման դերն ու նշանակությունը ուսումնառության գործընթացում

Հանրակրթական դպրոցն իր ուղիղ ներգործությունն ունի սովորողների կրթության, դաստիարակության, արժեքային համակարգի ձևավորման գործընթացում: Այս ամենը համակարգված ձևով իրականացվում է նաև հայոց լեզու և գրականություն առարկայի դասավանդման ընթացքում: Կրթական համակարգի բարեփոխումները պայմանավորված են կրթական նոր մարտահրավերներին համապատասխանելուն, այդ թվում՝ նոր մտածողություն, կյանքի հանտեպ նոր մոտեցումներ ունեցող մատաղ սերնդի կրթական կարիքները բավարարելուն: Կարծում ենք, որ ժամանակակից ուսուցման մեթոդներն ու եղանակները, ՏՀՏ գործիքների ներդրմամբ իրականացված դասերը, ոչ ստանդարտ դասերը կարող են հանդիսանալ այն գրավականը, որը սովորողի մոտ կմեծացնի հետաքրքրությունը ուսումնական առարկաների հանդեպ: Այս պարագայում ուսուցչի մասնագիտական որակները, նորարար կրթական մոտեցումները, ակտիվ կենսական դիրքորոշումը, նրա գիտելիքների ու հետաքրքրությունների պաշարը կապահովեն սովորողի իմացական ոլորտի և արժեհամակարգի ձևավորումը:

Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդներն ու գնահատման ձևերը ներգործում են սովորողների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի, սիրել ուսումնական առարկան, մոտիվացվել: Ուսուցման տարաբնույթ մոդելների կիրառման կարևոր բաղադրիչ է սովորողի գնահատումը և գնահատման ձևերի կառուցողական ընտրությունն ուսուցչի կողմից: Սովորողին կաղապարի մեջ դնող գնահատման եղանակի ընտրությունը կարող է հիասթափեցնել վերջինիս: Գնահատումը չպետք է դիտարկվի որպես զսպաշապիկ:

Աշակերտակենտրոն ուսուցման, ուսուցչի և աշակերտի արդյունավետ փոխգործակցության, եկուստեք ցուցաբերած սոցիալական ակտիվության

արդյունքում հնարավոր է հասնել նոր կարողությունների ու հմտությունների ամրակայմանը, որոնք սովորողը ձեռք է բերում ուսումնառության ընթացքում: Ուսումնառության գործընթացում սովորողի և ուսուցչի միջև պետք է գործի համագործակցություն, վստահություն, և հարգանք: Մանկավարժական այս մոտեցումը, կարծում ենք, ժամանակի ընթացքում հնարավորություն կտա լուծել մեր առջև դրած խնդիրը, այն է՝ սովորողի մոտ զարգացնել ինքնուրույն ու նախաձեռնողականություն, սեր ու հետաքրքրություն առարկայի նկատմամբ:

Նոր ժամանակներն իրենց հետ բերել են նոր զարգացումներ, նոր մարտահրավերներու նոր հիմնախնդիրներ: Այս համատեքստում, ինչպես արդեն նշել էինք, արդիականացման փուլում է նաև կրթական համակարգը: Գերխնդիր է դարձել այն հարցադրումը, թե ի՞նչ եղանակներով ու մեթոդներով է հնարավոր զարգացնել սովորողի ինքնուրույնությունը, տեղեկատվական գործունեությունը, ձևավորել հետաքրքրություն կրթության նկատմամբ և ի վերջո ինչպե՞ս է հարկավոր գնահատել սովորողին: Կարծում ենք, որ առարկայի դասավանդման ընթացքում հարկավոր է շեշտադրել ձևավորող գնահատումը և դրա գործիքները: Այս կերպ սովորողին ազատում ենք կաղապարներից, մենք էլ դուրս ենք գալիս սովորողի գիտելիքն ու որակական հատկանիշները միավորների վերածելու գործընթացից: Լավ արդյունքներ ունենալու տեսանկյունից մեծ նշանակություն ունեն նաև այն դասերը, որոնք ընթանում են միջառարկայական կապերի միջոցով: Սովորողին մոտիվացնելու համար էքսկուրսիաների ու արշավների դերը ևս շատ մեծ է:

Ի վերջո անչափ կարևոր է այս պարագայում նորարար և ստեղծարար ուսուցչի դերը: Նա ևս պետք է փորձի քայլել ժամանակի պահանջներին համապատասխան, սովորել, ինքնակրթվել, որպեսզի կարողան բավարարել արագ զարգացող սերնդի կրթական կարիքները: «Մանկավարժական աշխատողը պարտավոր է նպաստել ուսումնական հաստատությունում սովորողների կողմից հանրակրթական (հիմնական և լրացուցիչ) ծրագրերի յուրացման և առարկայական չափորոշիչների ապահովման գործընթացին, ինչպես նաև ուսուցման մեթոդների կիրառման միջոցով համապատասխան գիտելիքների, հմտությունների ձեռքբերմանը, արժեքային

համակարգի ձևավորմանը, իրականացնել հանրակրթական ծրագրերը»[1]:

Այսպիսով, կարծում ենք, որ մեծ ձեռքբերում կարելի է համարել սովորողների կարողունակությունների ձևավորմանն ուղղված կրթական մոդելի ներդրումը: Այն կարող է վերարժևորել սովորողի դերն ու ներգրավվածությունը իր իսկ ուսումնառության գործընթացում: Գերխնդիրը պետք է լինի ոչ թե թվանշանով վախեցնելը սովորողին, այլ սիրել տալ առարկան ու հետաքրքրել վերջինիս:

Կրթական համակարգում սովորողների գնահատման համար գոյություն ունեն գնահատման 2 փոխկապակցված ձևեր՝ ձևավորող (ուսուցանող) և միավորային:

Միավորային գնահատման համակարգը տարիներ շարունակ գործարկվել է ՀՀ կրթական համակարգում՝ սովորողների ուսումնառության ընթացիկ արդյունքներն ամրագրելու համար: Ուսումնառության արդյունքների գնահատումը նպատակ ունի որոշելու սովորողի մոտ կարողունակության զարգացման աստիճանը ըստ ուսումնական առարկաների չափորոշչով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան ձեռք բերած գիտելիքների և հմտությունների մակարդակի, ինչպես նաև դիրքորոշումների ու արժեքների ձևավորման, այն իրականացվում է քանակական (միավորային) և ձևավորող (ուսուցանող) ձևերով՝ դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից հաստատված կարգով[2]:

Նշենք, որ ուսումնական գործընթացում միավորային գնահատումն ունի զսպող դեր, որպեսզի ծույլ և անպատասխանատու սովորողները մտածեն իրենց ուսումնառության վերջնարդյունքի ու կիսամյակային գնահատականի մասին: Անշուշտ, բարձր միավոր ստանալը կարող է ունենալ հակառակ ազդեցությունը՝ մոտիվացնելով անբան ու անփույթ սովորողներին: Այս ամենը, սակայն, հարաբերական է և կախված է իրավիճակից: Միավորային գնահատումն աշակերտի ուսումնական ձեռքբերումների նիշային կամ թվային արտահայտությունն է, որի միջոցով պատկերացում է կազմվում կրթական պահանջներին աշակերտի համապատասխանության աստիճանի մասին:

---

[1] https://www.arlis.am/documentview.aspx?docid=71908 «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 27, կետ 3:

[2] ՀՀ Կառավարության՝ 08.04.2010 թվականի թիվ 439-Ն որոշում «Հանրակրթության պետական չափորոշչի ձևավորման և հաստատման կարգը և հանրակրթության պետական չափորոշիչը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 27-ի N 771-Ն և հունիսի 17-ի N 900-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին»:

Այնուամենայինիվ, խոսելով կրթության արդիականացման մասին, որտեղ ավանդական դասատիպերին գալիս են փոխարինելու կարողունակությունների ձևավորմանն ուղղված կրթության մոդելը, հարկ է անդրադառնանք ձևավորող կամ ուսուցանող գնահատման տեսակներին: Ձևավորող գնահատման նպատակը ուսումնական գործընթացում ուսուցիչների և սովորողների գործունեության ճշգրտումն ու շտկումն է՝ հիմնվելով ուսումնառության ընթացիկ արդյունքների վրա: Գործունեության շտկումը ենթադրում է ուսուցչի և սովորողների առջև դրված ուսումնական խնդիրների համատեղ լուծում՝ արդյունքները բարելավելու նպատակով: Կարողունակությունների ձևավորմանն ուղղված կրթությունն ուղղված է սովորողի կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, արժեքների, հմտությունների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևերի ուսուցմանը: Կարողունակությունները ձևավորվում են սովորողի ուսումնառության ընթացքում ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի, սովորողի կողմից ուսումնական առարկաների ծրագրերի բովանդակության յուրացման, ինչպես նաև ուսուցման գործընթացում դաստիարակության միջոցով և բխում են հանրակրթության հիմնական նպատակներից[3]:

Կարծում ենք, որ ավանդական կրթական մոտեցումները հիմնովին պետք է վերանայվեն: Նոր մեթոդական հնարներով հագեցած դասերն ունակ են բավարարել սովորողների կրթական պահանջմունքները, քանի որ մարդկության առաջընթացով պայմանավորված՝ էական փոփոխությունների են ենթարկվել այդ կարիքները՝ համալրվելով նոր ու արդիական պահանջմունքներով: Հարկ է վերանայել նաև միավորային գնագհատման մոդելը:

Ավանդական դասին շեշտը դրվում է միավորային գնահատման վրա, կարողունակությունների ձևավորմանն ուղղված դասին օգտագործվում են գնահատման տարբեր մոտեցումներ, շեշտը դրվում է ձևավորող գնահատման վրա[4]:

---

[3] ՀՀ Կառավարության՝ 08.04.2010 թվականի թիվ 439-Ն որոշում «Հանրակրթության պետական չափորոշչի ձևավորման և հաստատման կարգը և հանրակրթության պետական չափորոշիչը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 27-ի N 771-Ն և հունիսի 17-ի N 900-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին»

[4] «Մասնակցային մշակույթ և կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցում», ռեսուրսգրքույկ, Երևան,2020:

Ձևավորող գնահատումը ուսուցչի կողմից գնահատման 5 բաղադրիչների պլանավորված և պարբերական օգտագործումն է ամենօրյա աշխատանքում, դրանք են՝

- Ուսուցչի կողմից արդյունավետ հետադարձ կապի ապահովում:
- Սովորողների ակտիվ մասնակցություն սեփական ուսումնառության գործընթացին:
- Ուսուցման գործընթացի ճշգրտում և շտկում՝ հաշվի առնելով գնահատման արդյունքները:
- Գնահատման՝ սովորողների մոտիվացիայի և ինքնագնահատականի վրա խորքային ազդեցության գիտակցում, որն իր հերթին կարևոր ազդեցություն ունի ուսուցման արդյունավետության վրա:
- Սովորողների կողմից իրենց գիտելիքները ինքնուրույն գնահատելու ունակության ձևավորում[5]:

Դասի հիմքը ուսուցման նպատակն է. և՛ ուսուցչի և՛ սովորողի ողջ գործունեությունը պետք է ուղղված լինի այդ նպատակի իրագործմանը: Նպատակով են պայմանավորվում դասի ընթացքը, մեթոդների, միջոցների ու գնահատման ընտրությունը: Ձևավորող գնահատումը ուսուցչի և սովորողների համատեղ հետադարձ կապի անընդհատությունն է՝ երկկողմ գործունեության ճշգրտման, ուսուցման գործընթացի բարելավման և արդյունավետության բարձրացման նպատակով: Հետադարձ կապը ուսուցչին հնարավորություն է տալիս պատկերացնելու, թե ինչպես է ընթանում ուսուցման գործընթացը, տեղեկատվություն է տրամադրում սովորողների ձեռքբերումների և դժվարությունների մասին:

/Արդյունավետ հետադարձ կապն ավելի կարևոր, քան ուսուցումը» (Բիլ Գեյթս)/:

Հետադարձ կապը, դա մի համալիր գործողությունների շղթա է, որի միջոցով հնարավոր է զգալիորեն օպտիմալացնել ուսուցուման գործընթացներըԱյն թույլ է տալիս սովորողին շտկել սեփական սխալները, իսկ ուսուցիչն էլ հնարավորություն է ստանում համապատասխան տեղեկատվությունից պատկերացում կազմել ուսումնական գործընթացի այն ասպեկտների մասին, որոնց պետք է վերստին անդրադառնալ և ավելի շատ ուշադրություն դարձնել: Այս իմաստով հետադարձ

[5] https://kznakgnahatum.blogspot.com/p/blog-page.html «Ձևավորող գնահատում»:

կապը կարող է դրական ազդեցություն ունենալ ուսումնական գործընթացի վրա, քանի որ սովորողին հստակ մատնանշվում է խնդիրն ու դրա լուծման եղանակը: Հենվելով այդարձանագրումների վրա՝ ուսուցիչը կարող է ընտրել աշխատանքային գործունեության նոր ռազմավարություն, իսկ սովորողը բարելավել իր ուսումնառության որակը, եթե դրա անհրաժեշտության կարիքը կա: Հետադարձ կապը վերահսկողական գործառույթն ուղղված է կոնկրետ արդյունքի վրա, որն այս պարագայում կրթության որակի բարձրացումն ու ուսումնական գործընթացի հասանելի ու արդյունավետ կազմակերպումն է: Այնուամենայնիվ, այստեղ ուսուցչի դերակատարումն առանցքային է: Նրա կողմից ներդրված հետադարձ կապի համակարգը վերջինիցս պահանջելու է հետևողականություն, արագ արձագանք ուսուցման այս ձևի արդյունքներին, որոնք կարող են լինել թե՛ դրական, թե բացասական:

Պետք է նշել, որ հետադարձ կապը չպետք է պարտադրվի: Ուսուցիչը նախ պետք է համոզվի, որ սովորողը պատրաստ է ընդունել գովասանքը և հատկապես՝ քննադատություն, և որ հետադարձ կապի ընկալումը կլինի օբյեկտիվ[6]: Սովորողի գործողություններին անհրաժեշտ է արձագանքել ոչ միայն ճիշտը կամ սխալը մատնանշելով, այլ ավելի մանրամասն և ընդգրկուն մեկնաբանություններով: Օրինակ՝ քեզ մոտ ստացվեց որովհետև..., դու հաղթեցիր, քանի որ, դու ձախողեցիր, որովհետև...:

Կրթության համակարգում ժամանակակից անձնակողմներոշիչ հարացույցի հաստատման ու գործարկման հրամայականով պայմանավորված՝արդիական ու հրատապ է դարձել սովորողի անձի ինքնուրույնության աստիճանի բարձրացման ու ինքնակողմներոշվող դիրքորոշման ձևավորման հիմնախնդիրը: Ինքնագնահատման մեթոդներից առանձնացվում են ռուբրիկավորումը կամ ցուցանիշավորումը, չափանիշային աղյուսակի կազմումը,ռեֆլեքսային կազմակերպումը, նախագծային ինքնագնահատումը, Խմբային աշխատանքի ինքնագնահատումը, հետադարձ կապի հարցարանների լրացումը[7]:

---

[6] http://storage.library.opu.ua/online/periodic/kms_2011_5/085-088.pdf О.В. Олещук, «Эффективная обратная связь в обучении», стр.85.

[7] http://www.ysu.am/files/Anna_Aleksanyan_%202016.pdf Ա. Ալեքսանյան, Սովորողների ինքնավերլուծության և ինքնագնահատման մեթոդների կիրառման հիմնախնդիրը դասավանդման գործընթացում, ՀՊՄՀ, Երևան, 2016, էջ 11-13:

Այսպիսով, կարծում ենք, որ նորարարություններով պայմանավորված ձևավորող գնահատման ազդեցությունն ավելի կառուցողական մոտեցում է հայոց լեզվի և գրականության դասավանդման ժամանակ: Այս կերպ ուսուցիչը կարողանում է մշտադիտարկել սովորողի ուսումնառության գործընթացը, հետադարձ կապի միջոցով ստեղծում ներքին ու արտաքին ինքնանրադարձի հնարավորություն, ուսուցման ընթացքը սովորողի համար դադարում է լինել պարտադրված, նա ինքն է հասկանում առարկաների կարևորությունը իր կյանքում, փորձում է գիտելիքը կապակցել գործնական հմտությունների հետ, զերծ է մնում մեխանիկական վերարտադրումներից: Վստահ ենք, որ կարողունակությունների ձևավորման կրթական մոդելի ներդրումը մեծապես կբարձրացնի սովորողների առաջադիմությունն ու սովորելու մոտիվացիան:

Մեր դասավանդման ընթացքում կիրառել ենք գնահատման երկու տեսակներն էլ: Մշտադիտարկելով արդյունքներն ու վերլուծելով սովորողների կարծիքները՝ կարող ենք պնդել, որ ձևավորող գնահատման համակարգն իր գործիքներով ավելի է հետաքրքրել սովորողներին՝ բարձրացնելով վերջիններիս սովորելու, նոր գիտելիք, կարողություններ ու հմտություններ ամբարելու ցանկությունը:

1.2 «Մայրենի», «Հայոց լեզու», «Գրականություն» և «Հայ գրականություն» առարկաների դասերին ձևավորող գնահատման կիրառման օրինակներ

Կրթության մատչելիությունն ու հասանելիությունը հասարակության զարգացման ու առաջընթացի հիմնական անկյունաքարերից են, ուստի նորագույն տեխնոլոգիաներով հեղեղված այս ժամանակաշրջանում մանկավարժի գործառույթներից է նաև սովորողին դեպի կրթություն շահագրգռելը, մոտիվացնելը, խոսուն ու գործնական օրինակներով կրթության դերն ու նշանակությունը կարևորելը, վերջինիս մոտ ինքնուրույնության, նախաձեռնողական ու ստեղծագործական ունակությունների ձևավորելը:: «Մանկավարժական աշխատողը պարտավոր է սովորողների մեջ զարգացնել ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակություններ»[8]:

[8] https://www.arlis.am/documentview.aspx?docid=71908 «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 27, կետ 10:

Կրթության պահանջների բնականոն իրականացումը մեծապես պայմանավորված է ուսուցչի աշխատանքից. որքան բարձր են վերջինիս մասնագիտական ու մարդկային որակները, ինքնազարգացանալու, նորը սովորելու ցանկությունը, այդքան ուսուցիչը շատ բան ունի տալու մատաղ սերնդին: «Մանկավարժական աշխատողը պարտավոր է հետևողականորեն կատարելագործել իր առարկայական և մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները, իրականացնել ստեղծագործական և հետազոտական աշխատանքներ»[9]: Անշուշտ, ուսուցիչն է դասի ղեկավարը, նրա դերն առանցքային է սովորողների կրթության ու դաստիարակության հարցում, այնուամենայնիվ արդի կրթական համակարգում խրախուսվում է հատկապես աշակերտակենտրոն ուսուցման մոդելը, որտեղ սովորողը կարող է դուրս գալ լսողի պասիվ դերից՝ դառնալով դասի ընթացքի անմիջական ճարտարապետը: Աշակերտակենտրոն ուսուցումը խրախուսելի է նաև հայոց լեզվի ու գրականության դասավանդման ժամանակ, քանի որ լեզվական ու հաղորդակցական կարողությունները հանդիսանում են ուսումնական գործընթացի, սոցալական հմտությունների ձևավորման հիմնաքարերը, իսկ ուսուցման նմանօրինակ մոդելը թույլ է տալիս սովորողին դառնալ դասի կենտրոնական սուբյեկտը, ավելի շատ խոսել, չլինել պասիվ լսողի դերում: Լեզուն մտածողության միջոց է. հայոց լեզու ուսումնասիրելու ընթացքում պիտի զարգանան սովորողի քննադատաբար և պատկերավոր մտածելու, երևակայություն դրսևորելու, ստեղծարարության, ինչպես նաև բանավոր և գրավոր խոսքով իր մտածումները, անհանգստությունները ձևակերպելու և վերարտադրելու կարողությունը; Այսինքն՝ հայոց լեզվի և գրականության ուսումնասիրության հիմնական նպատակը բանավոր և գրավոր խոսք կառուցելու, տեքստ ստեղծելու ուսուցումն է[10]:

Լեզվական և հաղորդակցական կարողություններն անկյունաքարային են ցանկացած գործունեություն ծավալելու ընթացքում: Այս կարողության բնականոն զարգացումով է պայմանավորված նաև հանրակրթական հաստատությունում սովորողի զարգացումն ու մտավոր առաջընթացը, ուստի և ցանկացած ուսումնական

[9] Նույն տեղում՝ հոդված 27, կետ 5:

[10] https://escs.am/files/files/2020-07-17/0c0bec6bd1b12c6389919925ac049d7e.pdf «Հայոց լեզու» ծրագիր հանրակրթական դպրոցի 7-12-րդ դասարանների համար:

գործընթացի անբաժանելի ու փոխկապակցված բաղադրիչը հենց բնականոն զարգացող հաղորդակցումն է: Շատ կարևոր է հայոց լեզվի և գրականության դասաժամերի ընթացքում պայմաններ ստեղծել, որ սովորողի դերը լինի ավելի ակտիվ, նա ուղղակի կերպով լինի դասի ընթացքի կենտրոնում, հնարավորինս շատ խոսի, մեկնաբանի, կարծիք հայտնի: Ակտիվ խոսքը հնարավորություն է տալիս, որ սովորողն ավելի արագ զարգացնի կապակցված խոսքը, հղկի, կոկի, գեղեցկացնի այն: Անշուշտ, կապակցված խոսքին դրական հատկանիշներ տալու համար հարկ է, որ դրան նախորդած մյուս փուլերը՝ լեզվական հիմնական միավորների ուսուցումը, բառային ֆոնդի հարստացումը, քերականական կառուցվածքի ձևավորումը նույնպես իրականացված լինեն արդյունավետ, քանի որ հենց այս հենքի վրա է, որ սովորողն ունենում է լիարժեք կապակցված խոսք:

Այս ամենով պայմանավորված՝ կարևոր ենք համարում, որ յուրաքանչյուր ուսուցանվող թեմա լինի համակողմանի ու խորը ուսումնասիրված, չկրի մեխանիկական վերարտադրման բնույթ, կապակցվի գործնական հմտությունների հետ: 7-12 դասարանների հայոց լեզվի ուսումնառության համար սահմանվել են հետևյալ հիմնական և ենթահասկացությունները՝

- Հաղորդակցում՝ բանավոր հաղորդակցում, գրավոր հաղորդակցում, ոչ խոսքային հաղորդակցում:
- Լեզվական համակարգ՝ հայերենի հնչյունական, բառակազմական, քերականական համակարգեր:
- Ստեղծարարություն՝ տեքստի փոփոխում և ստեղծում, նախագիծ Ինքնություն՝ վերաբերմունք և արժևորում[11]:

Որպես ձևավորող գնահատման բաղադրիչ՝ հետադարձ կապի իրականացումն անհրաժեշտություն է նաև լեզվի ու գրականության դասավանդման ժամանակ: Այս համատեքստում կարելի է կիրառել խմբային քննարկումներ, երբ վերլուծությունները, արձանագրումներն իրականացվում են բանավոր քննարկման միջոցով: Օրինակ 12-րդ դասարանում Շառլ Ազնավուրի մասին կարելի է կազմակերպել բովանդակային քննարկում: Առանց որևէ ուսումնաօժանդակ նյութի լսել սովորողներին, ինչ գիտեն գրող, երգիչ, հասարակական գործիչ, դերասան Ազնավուրի մասին: Այսպես խմբային

[11] Նույն տեղում:

քննարկման ընթացքում սովորողներն իմի կբերեն իրենց գիտելիքները, ուսուցիչի համար հստակ կլինի այն, թե ով որչափ է տեղեկացված: Ուսուցիչը կարող է տալ հուշող բնույթի հարցադրումներ: Բերենք մի քանի օրինակ՝

1. Ո՞րն է Շառլ Ազնավուրի ֆենոմենը:
2. Կհիշե՞ք, թե առաջին անգամ ե՞րբ եք լսել մեծն հայի մասին:
3. Կարո՞ղ եք հիշել Սպիտակի երկրաշարժի ժամանակ վերջինիս հայրերնանվեր գործունեությունը, հնչեցրե՛ք գնահատողական կարծիք:
4. «Ազնավուրը Ազնավուրի մասնի» ստեղծագործությանը ծանոթ եք դեռ միջին դպրոցից, ի՞նչ կհիշեք, ի՞նչ էր պատմում Ազնավուրը իր և քրոջ մանկության մասին:

Հարցերի օգնությանմբ ուսուցիչն ապահովեց հետադարձ կապ, նպաստեց, որ դասարանը լինի ակտիվ, բոլորը մասնակցեն խմբային քննարկմանն ու հնչեցնեն վերլուծական ու գնահատողական խոսք: Այս պարագայում կարելի է բացառել մեխանիկական վերարտադրումը, սովորողները համպատրաստից են քննարկում, կարծիքներ հնչեցնում: Կարելի է խնդիրների շուրջ մեկնաբանություններ անել նաև գրավոր եղանակով: Բերենք օրինակ «Հայ գրականություն» առարկայի դասավանդման ընթացքից:

9-րդ դասարանում սովորողները խորապես ուսումնասիրում են «Սասունցի Դավիթ» էպոսը: Որպեսզի ուսուցիչը համակարգի նախորդ դասարաններում սովորողների գիտելիքներն ուսուցանվող թեմայի շուրջ և ապա նոր միայն խորացնի թեմայի ուսուցման ծավալը, կարող է կիրառել «գիտելիքների բուրգ հնարը: Դասի ժամանակ՝ նոր նյութի համատեղ ուսումնասիրությունից հետո, ուսուցիչը սովորողներին առաջարկում է ստեղծել իրենց գիտելիքների և հմտությունների բուրգը, այսինքն՝ ինչ սովորեցին և ինչ կարող են անել դասի տվյալ փուլում: Այդ նպատակով յուրաքանչյուր սովորող թղթի վրա պատկերում է բուրգ՝ ուսուցչի տված օրինակով, բուրգի ամեն մի հատվածում գրում է նախադասություններ, որոնց միջոցով արտահայտում է տվյալ թեմային վերաբերվող իր գիտելիքները, օրինակ՝ դրանք կարող են լինել հետաքրքիր փաստեր, օգտակար տեղեկություններ,

ինքնատիպ առաջադրանքներ, ղրական հույզեր: Ապա այդ թղթերը կախում են դասարանի պատին:

Բոլոր սովորողները հերթով մոտենում են թղթերին և կարդում գրածները: Վերջում անդրադառնում են գրված մտքերին, խմբավորում և ամփոփում[12]: Կարելի է կատարել նաև դասին ընթացքում ձեռքբերած գիտելիքների, կարողությունների ու հմտությունների քարտեզագրում: Դասի ավարտին սովորողները մտագրոհի միջոցով համապատասխան գրառումներով կպչուն թղթերը փակցնում են գրատախտակին:



Այս կերպ սովորողները կխմբավորեն իրենց իմացածը էպոսի ժանրային առանձնահատկությունների, հերոսների, նրանց դերերի ու մոտիվացիայի մասին: Կլինեն տարբեր կարծիքներ. սովորողները կսովորեն՝ միմյանց սովորեցնելով:

ջնական մեթոդի կիրառությունն էլ ավելի պատկերավր և առարկայական կդարձնի դասի ամփոփումը:Ուսուցիչն էլ նմանօրինակ աշխատանքի արդյունքում կիասկանա, թե ինչի վրա է անհրաժեշտ ավելի շատ ուշադրություն դարձնել:

Հետաքրքիր հետադարձ կապի ստեղծման եղանակ է խմբային աշխատանքների իրականացումը, որոնք կարող են լինել բազմազան՝գրավոր աշխատանք, փոքրիկ խմբերով աշխատանք: Խումբը կատարում է իր հանձնարարությունը՝ միաժամանակ վերահսկելով մյուս խմբերի աշխատանքը: Մայրենիի դասավանդման ընթացքում 6-րդ դասարանում ուսուցիչը կարող է հանձնարարել աշխատանք, ասենք՝ կատարել տրված բարդածանցավոր բառերի բառակազմական վերլուծություն, հիմնավորել սահմանումով:

Առաջադրանքի օրինակ՝ մայրաքաղաքային, կարգապահություն, հնչյունաբանություն, մայրաքաղաքային:

Սահմանում՝ / Բարդածանցավոր են մեկից ավելի արմատներից և առնվազն մեկ ածանցից կազմված բառերը/

Սովորողները աշխատանքը կկատարեն զննական մեթոդի օգնությամբ: Ա4 ֆորմատի թղթի վրա կգրեն սահմանումը, բառերը կբաժանեն բաղադրիչների, կառանձնացնեն արմատները, ածանցը, հոդակապը, կգտնեն արմատների անհնչյունափոխ ձևերը, ցույց կտան համապատասխան հնչյունափոխությունը: Նմանօրինակ աշխատանքների իրականացումը ոգևորում է սովորողներին, բերում նրանց ակտիվ դաշտ, բարձրացնում մոտիվացիան ու աշխատունակությունը: Այստեղ կարելի է իրականացնել ինքնագնահատման կամ փոխադարձ գնահատման ձևեր: Խմբային աշխատանքի ավարտին սովորողները կլրացնեն ինքնագնահատման ռուբրիկ:

Չարց	Գրեթե միշտ /3/	Համախ/4/	Հազվադեպ/1/
Մասնակցել եմ քննարկումներին			
Զգալի աշխատանք եմ կատարել			
Դժվարություններ եմ ունեցել			

Ինքնագնահատման արդյունքների վերլուծության արդյունքում ուսուցիչը կարող է պատկերացում կազմել յուրաքանչյուր սովորողի ձեռքբերումների, դժվարությունների և անհատական կարիքների մասին:

Սովորող-սովորող հետադարձ կապի մոդելի ապահովման մեկ այլ եղանակ է հետազոտական աշխատանքների կամ մասնագիտական զեկույցների պատրաստում հայոց լեզվից: Որպես թեմա կարելի է ընտրել, օրինակ՝ «Նյութական իմաստ արտահայտող խոսքի մասերի քերականական կարգերը»: Այս աշխատանքը կարելի է կատարել գիտելիքների համակարգման և ամփոփման ժամանակ:

Ավարտված աշխատանքը ներկայացնում է խմբից ընտրված սովորողը: Ինչն է առանձնահատուկ. խմբի յուրաքանչյուր անդամի գնահատականը տալիս են հենց այս խմբի սովորողները: Յուրաքանչյուր գնահատական, դարձյալ, պետք է հիմնավորված լինի՝ հաշվի առնելով այն հանգամանքը, թե ինչ ներդրում է ունեցել սովորողն աշխատանքի մեջ: Այս աշխատանքի արդյունքում սովորողները կամբողջացնեն ձևաբանությունից իրենց գիտելիքները, կհամեմատեն նյութական իմաստ արտահայտող խոսքի մասերի քերականական հատկանիշները, կդասդասեն դրանք, կգտնեն նմանություններ ու տարբերություններ՝ արդյունքները ներկայացնելով աղյուսակների տեսքով:

Նմանօրինակ աշակերտակենտրոն մոտեցումները,որտեղ սովորողն ինքնուրույն է համակարգումիր գիտելիքը, դատողություններ կատարում մոտիվացնում են վերջիններիս, դնում նրանց ակտիվ գործունեության մեջ, հնարավորություն տալիս ինքնուրույն տեղեկություններ գտնելու: Չի տրվում պատրաստի գիտելիք, չի խրախուսվում մեխանիկական վերարտադրությունը, սովորողն ինքն է դառնում հետազոտող, նախագծող, համակարգող, գնահատող:

Աշխատանքի ավարտին սովորողները կարող են լրացնել կարճ պատասխաններով ինքնագնահատման ռուբրիկ: Սա լավ հնարավորություն է հետադարձ կապի և ինքնաներաղարձի համար:

		ԱՅՈ	ՈՉ
1.	Կարողանում եմ տարբերել նյութական իմաստ արտահայտող խոսքի մասերը:		
2.	Գիտեմ դրանցից յուրաքանչյուրի քերականական հատկանիշները:		

3.	Տարբերում եմ թեքվող, չթեքվող և մասամբ թեքվող խոսքի մասերը:		
4.	Կարողանում եմ նյութական իմաստ արտահայտող խոսքի մասը դուրս գրել տեքստից և կատարել ձևաբանական վերլուծություն		
5.	Աշխատանքն ինձ հետաքրքրեց		

Կարող ենք պնդել, որ ուսուցման աշակերտակենտրոն մոտեցումները, այդ թվում՝ ձևավորող գնահատումը մեծ ոգևորությամբ է ընդունվում սովորողների կողմից: Ուսուցչի կողմից ստեղծվող հետադարձ կապը կարելի է համարել հաջողված, եթե այն ունենում է հետևյալ արդյունքները.

- Սովորողի մոտ ձևավորվել է հստակ պատկերացում իր ուժեղ կողմերի և նրանց զարգացման հնարավոր ուղիների մասին;
- Սովորողը ստացած տեղեկատվությունը ընդունում է և ներքին համաձայնության գալիս դրա հետ;
- Սովորողն ունի ցանկություն ուղղելու սեփական սխալները, և նա արդեն կատարել է առաջին քայլերն իր գիտելիքների բարելավման ուղղությամբ:

21-րդ դարի արագ զարգացող հասարակության պահանջն է ունենալ այնպիսի քաղաքացի, ով կկարողանա ճկուն լուծումներ գտնել արագ փոփոխվող պայմաններում, կլինի նախաձեռնող, կունենան սեփական ակտիվ դիրքորոշում, ստեղծագործական ու քննադատողական մտածողություն, ինչպես նաև չենթարկվելով արտաքին բացասական ազդեցություններին՝ կկարողանա ինքնավերլուծություն կատարել և առաջ քաշել սեփական ինքնագնահատման ու ինքնակառավարման մեխանիզմներ: Կրթության համակարգում ժամանակակից անձնակողմներոշիչ հարացույցի հաստատման ու գործարկման հրամայականով պայմանավորված՝ արդիական ու հրատապ է դարձել սովորողի անձի ինքնուրույնության աստիճանի բարձրացման ու ինքնակողմներոշվող դիրքորոշման ձևավորման հիմնախնդիրը: Վերլուծության և հատկապես ինքնավերլուծության գործընթացը թերի կհամարվի, եթե այն չամբողջանա կշռադատման կամ գնահատման գործընթացով, որտեղ առանձնահատուկ նշանակություն ունի ինքնագնահատումը: Այստեղից էլ բխում է սովորողների ինքնագնահատման մեթոդների ակտիվորեն կիրառման հարցը հենց դասավանդման գործընթացում: Ինքնագնահատման մեթոդներից առանձնացվում են ռուբրիկավորումը կամ

ցուցանիշավորումը, չափանիշային աղյուսակի կազմումը,ռեֆլեքսային կազմակերպումը, նախագծային ինքնագնահատումը, խմբային աշխատանքի ինքնագնահատումը, հետադարձ կապի հարցարանների լրացումը[13]:

Ձևավորող գնահատումն օգնում է ուսուցչին ընթացիկ արդյունքների հիման վրա նախանշել իր և սովորողների քայլերը: Ուսուցչի քայլերի ճշգրտումը և զարգացնող առաջադրանքների կիրառումը օգնում են բարելավել սովորողների ձեռքբերումները: Դասի յուրաքանչյուր փուլում ուսուցիչը ժամանակ առ ժամանակ հարցերի, դիտարկումների միջոցով պետք է ստուգի, թե արդյոք սովորողները չեն շեղվել նախատեսված նպատակներին տանող ուղուց14:

Այսպիսով, վերոգրյալից կարող ենք եզրակացնել, որ նոր մոտեցումները, այդ թվում և սովորողների գնահատման այլընտրանքային ձևերը, գնալով դառնում են օրախնդիր: Որևէ կերպ չստվերելով դասի ավանդական մոդելն ու միավորային գնահատումը՝ փաստենք, որ սովորողներն իրենք ունեն նորարարությունների կարիք, որոնք թույլ կտան դասի մեջ գտնել սեփական ցանկությունները, երազանքները, ձգտումները: Լիահույս ենք, որ նոր չափորոշիչների ներդրումը ՀՀ կրթական համակազը կդարձնի ավելի արդյունավետ, իսկ սովորողի համար ուսումնառության գործընթացը կդառնա ոչ թե պարտաղրանք, այլ հաճելին ու օգտակարը համատեղելու հարթակ:

---

[13] http://www.ysu.am/files/Anna Aleksanyan %202016.pdf Ա. Ալեքսանյան, Սովորողների ինքնավերլուծության և ինքնագնահատման մեթոդների կիրառման հիմնախնդիրը դասավանդման գործընթացում, ՀՊՄՀ, Երևան, 2016, էջ 11-13:

[14] https://kznakgnahatum.blogspot.com/2021/11/9.html?fbclid=IwAR1KZu0dnuM5f87XeeJzxszREyg7EgckGp_9zWcTpJZHdQ4iU0xxwQM1vbE «Ձևավորող գնահատման 9 հնար»:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսումնասիրելով ուսումնական գործընթացի արդիականացմանն ուղղված մի շարք հիմնահարցեր՝ այդ թվում գնահատման ձևերն ու եղանակները հայոց լեզվի և գրականության դասավանդման ընթացքում՝ կատարեմք մի քանի արձանագրումներ.

- Ուսումնական գործընթացի արդյունավետությունը մեծապես կախված է ուսուցչի մոտեցումներից, սեփական պարտականությունները գիտակցելուց և պատշաչ կատարումից:
- Ուսուցիչը պետք է անդադար կատարելագործի իր մանկավարժական հմտությունները, կիրառի նոր մեթոդական հնարներ, գնահատման նոր ձևեր, որպեսզի սովորողը հետաքրքրություններ գտնի դասի մեջ:
- Ժամանակի մարտահրավերներով պայմանավորված՝ ուսուցիչը պետք է ուսուցման նպատակների մեջ անպայման ունենա սովորել սովորոցնելով և նորը ստեղծելով հասկացությունները:
- Հետադարձ կապը պետք է ուսուցչի համար դառնա ուսումնական գրծընթացը մշտադիտարկելու և համակարգելու գործիք, իսկ դրա կիրառման հիմնական նպատակը պետք է լինի սովորողի առաջադիմության ապահովումը;
- Սովորողի համար պետք է ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ նա իրեն պահանջված ու կարևոր կզգա և բաց կլինի համագործակցության ու կարծիքների փոխանակման համար:
- Ուսուցիչը պետք է հաճախ դիմի հետադարձ կապի օգնությանը՝ որպես առաջնային նպատակ սահմանելով կրթության որակի և սովորողների առաջադիմության դրական միտումը:

Լ.իահույս ենք,որ սույն հետազոտությունը մեծապես կօգնի մեզ մանկավարժական պրակտիկայում և կդառնա մեր գործունեության հանար ուղենիշ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք:
2. ՀՀ Կառավարության՝ 08.04.2010 թվականի թիվ 439-Ն որոշում «Հանրակրթության պետական չափորոշչի ձևավորման և հաստատման կարգը և հանրակրթության պետական չափորոշիչը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 27-ի N 771-Ն և հունիսի 17-ի N 900-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին»:
3. https://escs.am/files/files/2020-07-17/0c0bec6bd1b12c6389919925ac049d7e.pdf «Հայոց լեզու» ծրագիր հանրակրթական դպրոցի 7-12-րդ դասարանների համար:
4. Մասնակցային մշակույթ և կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցում», ռեսուրսգրքույկ, Երևան, 2020:
5. https://kznakgnahatum.blogspot.com/p/blog-page.html «Ձևավորող գնահատում»:
6. http://www.ysu.am/files/Anna_Aleksanyan_%202016.pdf Ա. Ալեքսանյան, Սովորողների ինքնավերլուծության և ինքնագնահատման մեթոդների կիրառման հիմնախնդիրը դասավանդման գործընթացում, ՀՊՄՀ, Երևան, 2016:
7. http://storage.library.opu.ua/online/periodic/kms_2011_5/085-088.pdf О.В. Олещук, «Эффективная обратная связь в обучении», стр.85.